

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԿԱՊԻՏԱԼՈՎ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐԻ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԲԵՐ ԵՐԿՐՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ատենախոսության թեմա՝
Բանկային գործունեության միջազգայնացման
ազդեցությունը ազգային տնտեսությունների վրա
(Հայաստանի օրինակով)

Վարդան ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ
ԵՊՀ ասպիրանտ

Գիտական ղեկավար՝
Թորոս ԹՈՐՈՍՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Կերչին երկու տասնամյակների ընթացքում նկատվող վերազգային բանկերի միջազգային էքսպանսիան ուղեկցվում էր նրանց կողմից արտասահմանում ուղղակի ներդրումների արագ աճով, և շատ երկրների բանկային ոլորտներում իրենց ներկայության չափերի ավելացմամբ:

Տարբեր երկրներում, օտարերկրյա բանկերի ներկայությունը բավական բևեռացած պատկեր է ներկայացնում: Կան երկրներ, որտեղ օտարերկրյա բանկերը իրենց բանակայությամբ և ակտիվների մեծությամբ զբաղեցրել են շուկայի գրեթե 100%-ը: Մի խոսքով, ազգային բանկեր, այդ երկրներում գոյություն չունեն: Ազգային բանկերի լիովին բացակայություն է նկատվել այնպիսի երկրներում, ինչպիսիք են Բուրկինա Ֆասոն, Մադագասկարը, Չամբիան, Մոզամբիկը, Բարբադոսը: Դրանց մոտ են այն երկրները որտեղ օտարերկրյա բանկերը վերահսկում են շուկայի ավելի քան 90%-ը: Դրանք են Սենեգալը, Սալվադորը, Ճամայկան, Հոնկոնգը, Լիտվան, Էստոնիան, Բուսնիա-Հերցեգովինան, Ալբանիան:

Օտարերկրյա վերահսկողության 80-90%-ի շրջանակներում են Ուգանդան, Սվազիլենդը, Ռումինիան, Չեխիան և Սլովակիան: Իսկ մեր երկիրը մտնում է օտարերկրյա վերահսկողության 70-80% շրջանակներում, որտեղ մտնում են նաև Նոր Չեխոսլովակիան, Մեքսիկան, Տանզանիան, Կոնգոն, Բուլղարիան, Մակեդոնիան, Սերբիան և Մոնտենեգրոն:

Մյուս բևեռը դա օտարերկրյա կապիտալի լրիվ բացակայությունն է: Չարմանայի չէ որ օտարերկրյա կապիտալի 0-ական ներկայություն է գրանցվել Կուբայում և Իրանում: Հետաքրքիր է որ այս ցուցանիշը գրեթե 0-ի է մոտենում OECD անդամ երկու երկրներում՝ Ճապոնիայում և Շվեդիայում: Օտարերկրյա բանկերը բացակայում են Պարսից ծոցի նավթ արդյունահանող երկրներում՝ Սաուդյան Արաբիայում, Զաթարում, Օմանում: Եվ վերջապես, բանկային համակարգում օտարերկրյա ներկայության բացակայության այս խմբի մեջ են գտնվում նաև Եթովպիան, Շրի-Լանկան, Իսլանդիան, Լիբիան և Եմենը:

Օտարերկրյա բանկերի ակտիվներում մինչև 5% ներկայությունը գրանցվել է հետևյալ երկրներում՝ Չինաստան (1%), Ավստրալիա (2%), Հոլանդիա (2%), Իսպանիա (2%), Նիգերիա (3%), Ադրբեջան (3%), Հնդկաստան (5%), Շվեյցարիա (5%), Կանադա (5%): 5-10% շրջանակներում են գտնվում Ֆրանսիան (6%), Իտալիան (6%), Թայլանդը (6%), Կոլումբիան (9%):

Գ7-ի մեջ մտնող երկրներից երեքում այդ ցուցանիշը համեմատաբար բարձր էր՝ ԱՄՆ (18%), Մեծ Բրիտանիա (15%), Գերմանիա (12%):

Վերազգային բանկերի 1990-ական թթ-երից սկսած և մինչև օրս շարունակվող արտաքին էքսպանսիայի արագացումը սուր բանավեճեր է առաջացրել դրանից բխող տնտեսական հնարավոր հետևանքների շուրջ: Բանավեճերի մեծ մասը վերաբերում է զարգացող երկրների տնտեսությունների վրա ազդեցությանը: Մասնավորապես, զարգացող երկրներ օտարերկրյա բանկերի մուտքի դրական ազդեցությունների շարքին են դասվում.

- Օտարերկրյա բանկերի ծագման երկրների հետ քաղաքական և տնտեսական ինտեգրացման խթանումը:
- Բանկային ծառայությունների ազգային շուկայում մրցակցության ուժեղացումը, ինչը նպաստում է դրանց որակի, և հասանելիության բարձրացմանը, այդ թվում նաև վարկերի տոկոսադրույքների նվազման հաշվին:
- Տնտեսության մեջ ֆինանսական միջնորդության համակարգի արդյունավետության բարձրացումը, ի հաշիվ մոնոպոլիզմի, կլանայության և այլ թերությունների հաղթահարման:
- Օտարերկրյա ՎԱԲ-երի կողմից զարգացող երկրների տնտեսությունների ներդրումային վարկավորման ծավալների աճը, օգտագործելով ֆինդավորման ավելի «երկար» աղբյուրներ, համեմատած տեղական բանկերի հետ:
- Չարգացող երկրների տնտեսությունների իրական հատվածների մեջ օտարերկրյա ուղղակի ներդրումների հոսքի ավելացման նախապայմանների ստեղծումը: Ենթադրվում է որ վերազգային կորպորացիաները ավելի ակտիվորեն կգնան այն երկրներ, որտեղ օտարերկրյա բանկերի շնորհիվ գոյություն ունեն ժամանակակից բանկային ենթակառուցվածքներ:
- Տեղական բանկերի համար օտարերկրյա ՎԱԲ-երի կողմից օգտագործվող ինովացիոն տեխնոլոգիաների փոխառության հնարավորության աճը:

Այս ամենի կողքին, ինչու էն նաև բավական շատ կարծիքներ ընդդեմ ՎԱԲ-երի արտաքին էքսպանսիայի ընդլայնման: Այսպես, հաճախ ասվում է, որ ՎԱԲ-երի մուտքը թուլացնում է տեղական բանկերի դիրքերը և նախապայմաններ է ստեղծում որ

ազգային բանկային համակարգը լիովին անցնի արտասահմանյան վերահսկողության տակ: Միաժամանակ, ընդունող երկրների համար ավելանում են մակրոտնտեսական ռիսկերը: Մասնավորապես, ուժեղանում է տնտեսության ապակայունացման վտանգը, երկրում ՎԱԲ-երի ստորաբաժանումների գործունեության կտրուկ շրջման, ինչպես նաև ֆինանսական ռեսուրսների դեպի գլխամասեր լայնածավալ «հայրենադարձության» հետևանքով, ինչը տեղի է ունենում որոշ ճգնաժամային իրավիճակների առաջացման պատճառով: ՎԱԲ-երի տարածման մեկ այլ բացասական հետևանք է ներկայանում ազգային բանկային համակարգի կառավարելիության նվազումը, այդ թվում օբյեկտիվ բարդությունների պատճառով, որոնց հետ տեղական կարգավորող մարմինները ստիպված են բախվել, երբ գործ են ունենում օտարերկրյա բանկերի ստորաբաժանումների, հատկապես՝ մասնաճյուղերի հետ:

Ներկայացված «դեմ» և «կողմ» փաստարկները վերջին տարիներին դարձել են մեծաքանակ էմպիրիկ հետազոտությունների առարկա:

- Դրանց արդյունքները գնահատելով, հարկավոր է նաև նշել հետևյալը: Մի կողմից, կասկած չի առաջացնում այն փաստը, որ օտարերկրյա բանկերի մուտքի արդյունքում միջազգային մրցակցության ուժեղացումը խթանում է տեղական վարկային կազմակերպություններին ավելի օպտիմալացնել իրենց գործունեությունը, այդ թվում նաև հաստատել տնտեսապես ավելի հիմնավորված տոկոսադրույթներ:

Մյուս կողմից, պարզ է որ 2000-ականներին զարգացող երկրներում տոկոսադրույթների նվազեցմանը և բանկային հատվածի արդյունավետության ավելացմանը առաջին հերթին խթանել է իրենց տնտեսությունների և ֆինանսական շուկաների ընդհանուր աճը, այլ ոչ թե ՎԱԲ-երի էքսպանսիան, ինչը շատ հաճախ այդ աճի հետևանքն էր: Այս փաստը հաշվի առնելով, հասկանալի է դառնում, որ օտարերկրյա բանկերի ներկայության և ազգային վարկային հաստատությունների միջև պատճառահետևանքային կապերը ուսումնասիրելիս հարկավոր է զգուշություն ցուցաբերել:

- Ազգային և օտարերկրյա ծագումով բանկերի համեմատական արդյունավետության գնահատականները ցույց են տալիս, որ զարգացած երկրներում տեղական վարկային հաստատությունները իրենց ֆինանսական և գործառնական ցուցանիշներով, հիմնականում, գերազանցում են օտարերկրյա բանկերի ստորաբաժանումներին: Դա կապված է նրա հետ, որ օտարերկրյա բանկերը չունենալով նշակալից մրցակցային առավելություններ, ստիպված են հավելյալ ծաղփեր կրել, կապված զարգացած երկրների գերհագեցած շուկաներ մուտք գործելու հետ:

Միևնույն ժամանակ, այն թեզիսը որ զարգացած երկրների բանկային կազմակերպությունները, որոնք գործում են զարգացող երկրներում, ավելի արդյունավետ են աշխատում, քան իրենց տեղացի մրցակիցները, մասնագիտական գրականության մեջ միանշանակ աջակցություն չի ստանում:

Գիտնականների մի մասը^{1,2} պաշտպանում է դասական մոտեցումը, սակայն կան նաև հետազոտողներ^{3,4}, որոնք ցույց են տալիս, որ որոշ երկրներում (հատկապես լատինամերիկյան) օտարերկրյա բանկերի «դուստրերի» և տեղական բանկերի արդյունավետության ցուցանիշները այնքան էլ շատ չեն տարբերվում:

Այստեղ հարկավոր է նշել որ օտարերկրյա բանկի ներկայությունը դեռևս բավարար պայման չէ, որպեսզի այն արդյունավետ գործի: Երկիրը կարող է թույլ տալ ազատ մուտք գործել սեփական բանկային շուկա, սակայն սահմանափակումներ և խոչընդոտներ առաջացնել արդեն տեղում գործունեություն ծավալելու վրա: Օրինակ, մի շարք երկրներում ամբողջ շուկան կորող է վերահսկվել մեկ կամ մի քանի պետական բանկի կողմից, ինչպես Ադրբեյջանում և Բելառուսում:

- Որևիցե համոզիչ ապացույց չկա, որ օտարերկրյա բանկերի ներկայության ընդլայնումը զարգացող երկրում բերում է նրա տնտեսության միանշանակ դրական վերակառուցմանը: Նախ, նրա համար որ մի երկրում օտարերկրյա բանկի ստորաբաժանման ստեղծումը դեռևս բավարար պայման չէ, որպեսզի այնտեղ երկարաժամկետ ֆինանսական ռեսուրսներ հոսեն, որոնք անհրաժեշտ են տնտեսական զարգացում ապահովելու համար: Չարգացող երկրների փորձը ցույց է տալիս որ, օտարերկրյա ներդրումների (այդ թվում նաև ՕՈՒՆ-ների) աճը, առաջին հերթին կախված է նրանց տնտեսություններից և ներդրումային միջավայրից, այլ ոչ թե ՎԱԲ-երի մասնաճյուղերի կամ դուստր բանկերի ներկայությունից⁵: Երկրորդ հերթին, զարգացող երկրներում ՎԱԲ-երի գործունեությունը հետազոտելիս հասկանալի է դառնում, որ դրանք առաջին հերթին նախընտրում են աշխատել երկու տեսակի հաճախորդների հետ, որոնց ռիսկերը հնարավոր է առավել հստակ գնահատել՝ օտարերկրյա ՎԱԿ-երի դուստր ձեռնարկությունների, և տեղական խոշոր ընկերությունների հետ, վերջնականապես ձևավորված բիզնեսով և կայուն եկամուտով: Նոր թափ հավաքող բարձր տեխնոլոգիաներով օժտված ընկերությունների, ՓՄՁ-երի, և ենթակառուցվածքային նախագծերի ֆինանսավորումը ՎԱԲ-երի ստորաբաժանումների նպատակների մեջ հիմնականում չի մտնում: Եվ վերջապես օտարերկրյա բանկերի գործունեության տարածաշրջանային հետազոտությունը ցույց է տալիս որ նրանք նախընտրում են իրենց բիզնեսը կենտրոնացնել երկրների տնտեսական կենտրոններում, այդպիսով որևիցե ձևով չեն նպաստում երկրների զարգացման տարածաշրջանային անհավասարության հաղթահարմանը: Երկրների մեծ մասում օտարերկրյա բանկերի քանակի աճը չի բերում բանկային ցանցերի խթանության, կամ բնակչությանը բանկային ծառայություններ մատուցման ընդլայնմանը: Ավելին, եթե ՎԱԲ-երի շուկա մուտք գործելը տեղի է ունեցել տեղական հաստատությունների գնման ճանապարհով, ապա շատ հաճախ նոր տերերը ցանկանալով բարձրացնել ձեռք բերված ակտիվների շահավետությունը, իրականացնել են պակաս շահավետ ստորաբաժանումների լիկվիդացում:

- Որևիցե ապացույց չկա որ օտարերկրյա բանկային կապիտալի ներկայությունը կարող է բացասական ազդեցություն ունենալ ընդունող երկրների տնտեսության և բանկային համակարգի վրա: Այսպես, մասնագիտական գրականության մեջ որևէ ապացույց չկա որ ՎԱԲ-երի ստորաբաժանումները՝

¹Bonin J., Iftekhar H., Wachtel P. Bank Performance, Efficiency and Ownership in Transition Countries. - Journal of Banking and Finance, 2005, vol. 29. - C 31-53.

²Micco A, Panizza U, Yanez M. Bank Ownership and Performance: Does Politics Matter? - Journal of Banking and Finance, 2007, vol. 31. - C 219-41.

³Correa R. Cross-border Bank Acquisitions: Is there a Performance Effect? - Board of Governors of the Federal Reserve System. International Finance Discussion Papers, 2008, № 922

⁴Crystal J., Dages J., Goldberg L. Does Foreign Ownership Contribute to Sounder Banks? The Latin American Experience. - in Litan R.E., Masson P., Pomerleau M (eds.). Open Doors: Foreign Participation in Emerging Financial Systems, Brookings Press, 2001. - C 217-66.

⁵Detragiache E., Tresselt T., Gupta P. Foreign Banks in Poor Countries: Theory and Evidence. - Paper presented at the 7th Jacques Polak Annual Research Conference. Washington, DC, November 2006.

✓ Դիտմամբ իրականացնում են որոշ ոլորտների կամ ձեռնարկությունների վարկային բյուրոյա, ցանկանալով տեղական ընկերությունների աճը դանդաղեցնել և դրանով ճանապարհ բացել իրենց արտասահմանյան առաջնային հաճախորդ ընկերությունների համար:

✓ Չբաղվում են միայն կարճաժամկետ վարկերի տրամադրումով և խուսափում են երկարաժամկետ վարկեր տրամադրելուց:

✓ Ներքին շուկայում հավաքում են ինայոդություններ և դրանք դուրս են բերում արտերկիր:

✓ Տեղական բանկերին դուրս են մղում բանկային ծառայությունների ազգային շուկայի ամենագրավիչ հատվածներից, նպաստելով դրանց գործունեության ծավալների կրճատմանը (փորձը ցույց է տալիս որ դուրս են մղվում ի սկզբանե թույլ և անմրցունակ տեղական բանկերը, երբ տեղական ուժեղ մասնակիցները պահպանում են իրենց դիրքերը):

Ավելի բարդ է ճզնաժամային երևույթների ձևավորման և տարածման մեջ ՎԱԲ-երի դերի հարցը: Բազմաթիվ հտազոտություններ ցույց են տալիս որ օտարերկրյա բանկերի ստորաբաժանումները իրենց գործելու երկրներում ճզնաժամային երևույթներին արձագանքում են նույն կերպ, ինչպես տեղական վարկային կազմակերպությունները, մասնավորապես համապատասխան չափերով կրճատելով իրենց վարկային և ներդրումային գործունեությունը⁶:

Մյուս կողմից այլ հարց է այն, որ գլոբալ մակարդակով ՎԱԲ-երի և այլ ֆինանսական կազմակերպությունների սերտ համագործակցության և փոխկախվածության հետևանքով, աշխարհի մի մասում առաջացած ճզնաժամային երևույթները կարող են դոմինոյի էֆեկտով վնասել նաև աշխարհի այլ հատվածներում գտնվող տեսություններին: Այդ երևույթի վառ օրինակն է 2008-2009թթ. ֆինանսատնտեսական ճզնաժամը:

Ամփոփելով գտնվելու երկրների տնտեսությունների վրա ՎԱԲ-երի ստորաբաժանումների ազդեցության հետազոտությունը, հարկավոր է ընդունել որ այս ոլորտում դժվար է որևիցե ընդհանրացումներ անել, և հարկավոր է առաջնորդվել «մի կողմից, մյուս կողմից» սկզբունքով⁷:

Մի կողմից, ՎԱԲ-երի մուտքը, նամանավանդ սահմանափակ ծավալներով, կարող է դրական ազդեցություն ունենալ ընդունող երկրների բանկային համակարգերի վրա, արտասահմանից ներդրումային հոսքերի աճի, մրցակցության ուժեղացման, կառավարչական նորարարությունների ներթափանցման: Մի խոսքով հնարավոր է դառնում երկրի որոշ բանկային համակարգի կառուցվածքը փոխել:

Մյուս կողմից, հարկավոր է հիշել, որ ՎԱԲ-երը առևտրային կազմակերպություններ են, որոնց առաջնային նպատակը շահույթ ստանալն է, որից բխող համապատասխան գործողությունները միշտ չէ որ կարող են համընկնել ընդունող երկրի շահերի հետ: Այսպես, սխալ կլիներ ակնկալել որ ՎԱԲ-երը պետք է ակտիվորեն մասնակցեն երկրների տնտեսությունների համար առաջնային համարվող կառուցվածքային բարեփոխումների ծրագրերին: Սա, իհարկե հող է պատրաստում օտարերկրյա բանկերի և ընդունող երկրների կառավարությունների միջև կոնֆլիկտների առաջացմանը: Մրանից հետևում են երկու ակնհայտ հետևություններ՝ նախ և առաջ, որպես տնտեսական ինդիկատորների հաղթահարման միջոց, յուրաքանչյուր երկիր պետք է առաջին հերթին խրախուսի ազգային բանկերի զարգացումը, այլ ոչ թե հույսը դնի օտարերկրյա բանկային կապիտալի վրա: Երկրորդ հերթին հարկավոր է օտարերկրյա բանկերի նկատմամբ կառուցել մի այնպիսի պետական քաղաքականություն, որպեսզի հնարավոր լինի մաքսիմալ օգտագործել դրանց ներկայությունից բխող առավելությունները:

*Ներկայացվել է 10.11.2017թ.
Ընդունվել է տպագրության 26.12.2017թ.*

⁶ Arena M., Reinhart C, Vazquez F. The lending Channel in Emerging Economies: Are Foreign Banks Different? - NBER, Cambridge, Working Paper №12340,2006.

⁷ Розпнський И.А. Указ.соч - С. 66.